

ՍԱՐԳԻՍ.

Լուսանկ. տախտ. XXII.

## 25. ՎԵՐԱՆԵՍԻ ՀՈՒՇԱՐՁԱՆ

***196. ՎԵՐԱՆԵՍԻ ՀՈՒՇԱՐՁԱՆ.*** *զույգ խաչքարերից ձախակողմյանի տակին.*



ԻՍՐԱԵԼ ԳՐԻՉ ՅԻՇ[ԵՑԷ]Ք[.]

Լուսանկ. տախտ. XXIII.

## 26. ՔԱՐԻՄԱԴԻՆԻ ԵԿԵՂԵՑԻ

***197. ՔԱՐԻՄԱԴԻՆԻ ԵԿԵՂԵՑԻ.*** *երկու մասի կոտրված երեսպատման քարի վրա. արձանագրության ձախ ծայրը, որը փորագրված է եղել ուրիշ քարի վրա՝ չի պահպանվել. հայտնաբերված է 1912 թ. պեղումների ժամանակ.*



[ՇՆՈՐՀԻՒ]Ն ԱՅ. ԵՍ ՈՒՔԱՆ [Ք]Ա[Ր]ԻՄԱՏԻՆ ԵՒ ՊԱՊՔԱՆ Վ[Ա]ԽՐԱՏ[Ի]Ն ԵՒ ՀԱՐՍՆ ԻՄ ԴԱՊՏԱՅ ԽԱԹՈՒ[Ն] ՇԻՆԵՑԱՔ ԶԱՆԿԱԿԱՏՈՒՆՍ ԵՒ [ՏՎ]ԱՔ ՆՎԵՐՔ Ի ՀԱԼԱԼ ԸՆՉԻՑ ՄԵ[Ր]ՈՑ: ՓՈԽԱՐԷՆ ՀԱՏՈՒՑԻՆ ՍՊԱՍԱ[Ւ]ՈՐՔ ԵԿԵՂԵՑՈՅՍ — Ա[Ւ]Ր ՅԵՐԿՈ[Ւ]ՍԻՆ ԽՈՐԱՆԻՆ ՊԱՏԱՐԱԳԵՆ ՔՐԻՍՏՈՍ [Ի] ՏԱՐՈՒՄՆ — ԱՒՐ ՄԵՐ ՀԱՒՐ[Ն] ՍԱՐԳՍԻ ԵՒ ՍԹԷ ԵՒ ՍԱՐԳՍԻ ԱՐՔԱ[ՅՈՒ]ԻՆՆԻՆ ԵՒ ՄԵՐՁԷ ԵՒ — ԱՒՐ[Ն] ՄԵԶ ՈՒՔԱՆԻՍ ԵՒ ՊԱՊՔԱՆԻՍ ԵՒ ԴԱՊՏ[Ա]Յ ԽԱԹՈՒՆԻՍ . . . .

Հրատ. Марр, А, 103.
Լուսանկ. տախտ. XXIII.

***198. ՔԱՐԻՄԱԴԻՆԻ ԵԿԵՂԵՑԻ.*** *գերեզմանաքարի վերին հարթության վրա. գտնվում է եկեղեցուց հարավ-արևմուտք. հայտնաբերված է 1912 թ. պեղումների ժամանակ.*



ԱՅՍ Է ՀԱ[Ն]ԳԻՍՏ Ս[Ի]Ն[Ն]Մ[ԷԻ]ՈՆ[Ի]Ն.

Հրատ. Марр, А, 102.
Լուսանկ. տախտ. XXIV.

***199. ՔԱՐԻՄԱԴԻՆԻ ԵԿԵՂԵՑԻ.*** *մի փոքր խաչքարի շրջանակի վրա. հայտնաբերված է 1912 թ. պեղումների ժամանակ.*



ԱԶԶԻՆ Է ԽԱՅՋՍ:

Լուսանկ. տախտ. XXIII.

***200. ՔԱՐԻՄԱԴԻՆԻ ԵԿԵՂԵՑԻ.*** *մի շատ փոքր խաչքարի ներքևի մասում. հայտնաբերված է 1912 թ. պեղումների ժամանակ.*



Ի Թ[ՈՒԻՆ] [Ո]ԽԹ:



7—405

**201. ՔԱՐԻՄԱԴԻՆԻ ԵԿԵՂԵՑԻ.** *երեսպատման քարի վրա. հայտնաբերված է 1912 թ. պեղումների ժամանակ.*

Ի Թ[ՎԻ]Ն[Ս] :ՉԻԱ:/ . . .

**202. ՔԱՐԻՄԱԴԻՆԻ ԵԿԵՂԵՑՈՒ** *հյուսիս-արևմուտքում մի բնակելի տան մեծ սենյակի պատին, ներքուստ.*

ԻԹՉԻԱ Զայ[ն] որ սուտ ասէ, կամ
մարդոյ զէշ ասէ, կամ
ՋԴԱԽԻ ճիւր խարդ[ախ]է[՝]
այն իմ որդ[ի] չլինի:

Հրատ. Марр, A. 108.

**203. ՔԱՐԻՄԱԴԻՆԻ ԵԿԵՂԵՑՈՒ** *հյուսիս-արևմուտքում, նախորդ բնակելի տան մի այլ սենյակի պատին, պատուհանի մոտ.*

Պապք (Պապքան)

*Այս երկու արձանագրությունները Հ. Օրբելին չուներ, առնում ենք Մառի „Ани" գրքից, էջ 108։ Մառի կարծիքով Պապքանը № 197 արձանագրության մեջ հիշատակված Պապքանն է, եկեղեցու հովանավորողը. հետևաբար պեղված շենքն էլ՝ նրա տունը* (խմբ.):

Հրատ. Марр, A, 108.

## 27. ՀՈՌՈՄԻ ԵԿԵՂԵՑԻ

**204. ՀՈՌՈՄԻ ԵԿԵՂԵՑԻ.** *արտաքուստ. երեսպատման քարի վրա. գտնվել է այն բլրի լանջին, որը հյուսիսից ծածկում էր եկեղեցու ավերակները՝ պեղումներից առաջ.*



Ի Թ[Վ]Ի[Ն], :ՈԿԶ: ՇՆՈՐՀԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ. ԵՍ ՀՈՌՈՄ ՏԻԿ[Ի]Ն, ԴՈՒ[Ս]ՏՐ ՅՈՎԱՆԻՍԻ ՎԵՐՍՏԻ՛Ն ՛ՆՈՐՈԳ[Ե]ՑԻ Զ[Ս]ՈՒՐԲ ԱԾԱԾԻ՛ՆՍ Ի ՀԱԼԱԼ ՅԱՐԴԵԱՆՑ[Ս] [Ի]ՒՄՈ[Ց] ԵՒ ՈՐԴԻ ԻՄ ԶԵՆԻՇԱ[Հ] Ի ԲԱՐԵԽԱՒՍ[Ո]ՒԹԻՒ[Ն] ՄԵԶ ԵՒ ԾՆՈՂԱՑ ՄԵՐ[Ո]ՑՍ: ՍՊԱՍԱՒ[ՈՐ]Ք ՍՈՐԱ Ի ՏԱՐԻ՛Ն ԵՐԵՔ ԱՒՐ [ՊԱ]ՏԱՐԱԳԵ՛Ն Զ[Ք]ՐԻՍՏՈՍ. ԶՄԼԿՆ ԻՆՋ ՀՈՌՈՄ ՏԻԿՆԱ, Զ[Մ]ԼԿՆ.../...
... ՏԻԿՆԱ ՄԼԿՆ ԶԵՆԻՇԱՀ[Ի]Ն: ԿԱՏԱՐՈՂՔ ԱՒՐ[Հ]ՆԻՆ Ի ՔՐԻՍՏՈՍԼ, ՀԱԿԱՌԱԿ[Ք]Ն ԴԱՏԻ՛Ն ՅԱՑ[Ի]:

Հրատ. Марр, H, 70; *Բասմաջյան, № 50;* Լուսանկ. *տախտ.* XXIII.

## 28. ՄԽԻԹԱՐԻ ՀՈՒՇԱՐՁԱՆ

**205. ՄԽԻԹԱՐԻ ՀՈՒՇԱՐՁԱՆ.** *խաչքարի պատվանդանի վրա. հայտնաբերված է 1907 թ. պեղումների ժամանակ.*